Լուսինե Վարդանյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ORCID ID: 0009-0001-9731-7033
lusinevardanyan@litinst.sci.am
DOI: 10.54503/1829-0116-2025.2-91

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑՈՒ ԱՌԱԿՆԵՐԻ ԲԱԿՈՒՆՑՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ*

Բանալի բառեր *- Վարդան Այգեկցի, առակ, միջնադար, «Աղվեսագիրք», Ակսել Բակունց:*

Հոդվածում վերլուծված են միջնադարյան մատենագիր Վարդան Այգեկցու առակների բակունցյան մշակումները, ինչպես նաև հայոց միջնադարի նրա ընկալումը: Ակսել Բակունցը թարգմանել է Այգեկցու քառասուն առակ, որոնց գրաբարյան բնագրերի համեմատությունը դրանց աշխարհաբարի փոխարկումներին ցույց է տալիս գրողի չափազանց նուրբ և հետևողական մոտեցումն իր հետապնդած խնդրին: Առակի ժանրի ընտրությունը ևս Բակունցի նախասիրությունների և փոքր արձակի զարգացումների ուսումնասիրության ծիրում է: Սա Ակսել Բակունցի վերջին գործն էր (լույս է տեսել 1935 թ.), սակայն մինչև հիսունական թվականները լռության է մատնվել նրա դերն Այգեկցու առակների թարգմանության հարցում, իսկ 1956 թ. լույս է տեսել դրանց աղավաղված տարբերակը: Այս թեմայի արծարծումն *արդիական* է թե՛ առակների խոսուն բովանդակության, թե՛ դրանց տրված բակունցյան թարգմանական մեկնության, թե՛ միջնադարի զարգացման օրինաչափությունների բակունցյան դիտարկումների տեսանկյունից: Բայց *ամենաէականն* առակի ժանրի կենսունակության ընձեռած հնարավորությունն է գրականության քնարական էության բացահայտման առումով, ինչը ևս փորձել ենք իրագործել այս հոդվածում:

* *Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2025 թ.:*
Ուղարկվել է գրախոսության 03.07.2025 թ.:

Lusine Vardanyan
PhD in Philology
Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA
ORCID ID: 0009-0001-9731-7033
lusinevardanyan@litinst.sci.am

BAKUNTS'S ADAPTATIONS OF VARDAN AYGEKTSI'S FABLES

Keywords: *Vardan Aygektsi, fable, Middle Ages, Book of the Fox, Axel Bakunts.*

This article examines Axel Bakunts's adaptations of the fables by the medieval Armenian writer Vardan Aygektsi, as well as Bakunts's perception of the Armenian Middle Ages. Axel Bakunts translated forty of Aygektsi's fables, and a comparison between the Classical Armenian originals and their vernacular renderings reveals the writer's exceptionally nuanced and consistent approach to his task.

The choice of the fable genre itself also falls within Bakunts's literary predilections and the broader context of the development of short prose. This was the last work by Axel Bakunts (published in 1935), yet until the 1950s his role in the translation of Aygektsi's fables remained unacknowledged. In 1956, a truncated version of the translations was published.

The relevance of this topic stems both from the expressive content of the fables themselves, and from Bakunts's interpretative strategies as a translator, as well as from his reflections on the developmental patterns of the medieval period. Most significantly, however, is the potential afforded by the vitality of the fable genre in uncovering the lyrical essence of literature—an aspect this article also seeks to explore.

Лусине Варданян
Кандидат филологических наук
Институт литературы им. М. Абегяна НАН РА
ORCID ID: 0009-0001-9731-7033
lusinevardanyan@litinst.sci.am

БАКУНЦОВСКИЕ ИНТЕРПРЕТАЦИИ БАСЕН ВАРДАНА АЙГЕКЦИ

Ключевые слова: *Вардан Айгекци, басня, средневековье, «Лисья книга», Аксель Бакунц.*

В статье проанализированы бакунцовские обработки басен средневекового писателя Вардана Айгекци, а также осмысление им армянского Средневековья. Аксель Бакунц перевёл сорок басен Айгекци, и сопоставление оригиналов на грабаре с их переводами на разговорный армянский язык демонстрирует исключительно тонкий и последовательный подход писателя к поставленной задаче. Выбор жанра басни также вписывается в сферу интересов Бакунца и в контекст развития малой прозы.

Эта работа стала последним произведением Акселя Бакунца (опубликована в 1935 г.), однако вплоть до 1950-х годов его роль в переводе басен Айгекци ос-

тавалась в тени, и лишь в 1956 году была издана их усечённая версия. Обращение к данной теме актуально как с точки зрения содержательной выразительности басен, так и с позиции бакунцовской переводческой интерпретации, а также в свете наблюдений Бакунца относительно закономерностей развития средневековья.

Однако наиболее существенным представляется потенциал жанра басни в раскрытии лирической природы литературы – аспект, который также предпринят к рассмотрению в рамках данной статьи.

Ներածություն

Խորհրդային գրականության պատմության մեջ 30-ական թվականներն աչքի ընկան միջնադարի նկատմամբ հետաքրքրությամբ, և շատ գրողներ իրենց ստեղծագործություններում անդրադարձան միջնադարից քաղված թեմաներին: Այդպես գրվեցին Եղիշե Չարենցի «Տաղեր և խորհուրդներ» շարքը և «Գիրք ճանապարհի» ժողովածուի այլ բանաստեղծություններ[1]: Հայրենական պատերազմում զոհված վաղամեռիկ բանաստեղծ Թաթուլ Հուրյանի երկերում տեսնում ենք միջնադարի թեմայով երկու պոեմ՝ «Սասունցի Դավիթ» (1939 թ.), «Սայաթ-Նովա» (1939 թ.), ինչպես նաև «Ֆրիկ» դրաման (1945 թ.): Ահա այդպիսի մի անդրադարձ է միջնադարին և Ակսել Բակունցի՝ Վարդան Այգեկցու առակների թարգմանությունը (1935 թ.), որը ճակատագրի բերումով նրա վերջին գործը եղավ:

Միջնադարում առակի ժանրային բնորոշումը կտրուկ սահմանազատված չէր հեքիաթի, առասպելի, զրույցի և նույնիսկ հանելուկի բնորոշումներից (հանելուկը հաճախ *առակ* բառով է բնորոշվել) (ՆՀԲ, 1836: 283): Պատճառը, թերևս, նաև բառի չափազանց խոսուն ներքին ձևն էր՝ առ+ակ(ն) «աչք» (Գալստյան, 2014: 22), ասել է թե՝ ակնառու, ակնհայտ, բացահայտ: Անխրատ, մոլորյալ, մեղավոր մարդուն անառակ կոչելը, որը հայերենի առանձնահատկությունն է, հուշում է գրական այս տեսակի չափազանց կարևորման մասին մեր ժողովրդի լեզվամտածողության մեջ (Բաբաջանյան, 2014: 4): Առակի այս էությունը միջնադարից մինչ արդիականություն կենսունակ է պահել ժանրը, և շատ հեղինակներ են դիմել գրական այս տեսակին՝ Աբովյան, Նար-Դոս, Իսահակյան, Թոթովենց, Բակունց և այլք: Հոդվածի *կարևորությունն* ու *արդիականությունը* պայմանավորված են նախ և առաջ այդ կենսունակությամբ:

Լ. Վիգոտսկին իր «Արվեստի հոգեբանությունը» գրքում որպես գրականության աստիճանական զարգացում դիտարկում է առակը, նորավեպը և ողբերգությունը, որոնք, ըստ նրա, հետզհետե բարդացող և մեկը մյուսից հառնող գրական ձևեր են: Ընդ որում՝ առակն է այն տեսակը, որը

[1] Չարենցի դեպքում անդրադարձը միջնադարին նաև ժանրաձևերի համակարգում էր՝ տեսիլ, տաղ, աղոթք, աքրոստիքոս և այլն:

կանգնած է քնարերգության սահմանագծին և միշտ առաջ է քաշվել հետազոտողների կողմից որպես ամենատարրական գրական ձև, որում առավել դյուրին և վառ են արտացոլվում քնարերգության բոլոր առանձնահատկությունները (Виготский, 2023: 149)։ Նշենք, որ առակի ներքին զարգացման այդ հնարավորությունը նկատում է նաև Հովսեփ Օրբելին, որը շատ առակներ համարում է նորավեպի մանրակաղապար, որը, կախված պատմողի երևակայությունից, կարող է բացվել, փոփոխվել, ամենատարբեր զարգացումներն ունենալ (Орбели, 1956: 13)։ Ակսել Բակունցը, որի արձակն օժտված էր ընդգծված քնարականությամբ, առակների իր մշակումներում չէր կարող չզգալ և չներդնել Լև Վիգոտսկու մատնանշած քնարականությունն ու նուրբ հոգեբանությունը։

Հոդվածում վերլուծված են նաև Ակսել Բակունցի՝ միջնադարի ընկալումն ու Այգեկցու բնագրի նրա փոխադրումներն աշխարհաբարի։ Ակնհայտ է, որ միջնադարի ընկալման առումով չէին կարող չդրսևորվել Բակունցի ապրած ժամանակի սահմանափակումները՝ աստվածամերժություն, հոգևորական հեղինակի դերի ոչ լիարժեք ներկայացում, նույն կերպ՝ հոգևոր քարոզների համար գրված առակների բնագրերի որոշակի փոփոխություններ։ Հոդվածի *նպատակը* բակունցյան մշակումների կենսունակության, դրանց ճշգրտության և դիպուկության բացահայտումն է, որի երաշխիքը նախ և առաջ միջնադարի նրա հնարավորինս համարժեք ընալումն է, ապա՝ բնագրի հետ աշխատելու, այն զգալու նրա գրողական վարպետությունը։ Նպատակի իրագործման համար կիրառվել են պատմահամեմատական, տեքստային, ինչպես նաև հոգեբանական վերլուծության մեթոդները։

Բակունցի վերաբերմունքը հայոց միջնադարին և առակի ժանրին

Ակսել Բակունցի համար իր ապրած դժվարին ժամանակներում (նկատի ունենք Խորհրդային միության ժխտողական վերաբերմունքն ազգային մշակույթների հանդեպ 20-30-ական թվականներին) հայոց միջնադար մուտք գործելու «նախաշավիղը» Վարդան Այգեկցու առակներն էին։ Այգեկցին՝ ինքը, ուներ երկու ժամանակների՝ իրեն տրված վերջավորի և հավերժականի իրական ընկալումը և իր քարոզներով երկխոսում էր նաև իր ապագայի ունկնդիրների հետ. «Վա՛յ ինձ, մանկու՛նք Սիոնի, որ գայք հետ մեր յաշխարհի, զի ցանգամ տեսանել զձեզ և ոչ կարեմ, զի հողացեա՛լ եմ ի գերեզմանի. ապա գրաւքս այս խաւսիմ ընդ ձեզ մինչև ի հինգ և յեւթն ազգն. և կա՛մ հոգովս ի միջի ձերում» (Աբեղյան, 1970։ 195)։ Սա կյանքի անցողիկության և գրով հիշատակելի մնալու միջնադարյան ընկալումն էր։ Ակսել Բակունցը նույնպես առակին նվիրված իր ընդարձակ առաջա-

բանն սկսում է այս տողերով, միայն թե քրիստոնեական վարդապետության մեջ եզրույթային արժեք ունեցող *մանկունք Միոնի*[1] արտահայտությունը փոխարինում է *իմ որդիներ* արտահայտությամբ: Մեջբերումը Բակունցի թարգմանությամբ հնչում է այսպես. «Վա՜յ ինձ, ով իմ որդիներ, որ աշխարհ պիտի գաք ինձնից հետո, որովհետև ցանկանում եմ ձեզ տեսնել և չեմ կարող, քանի որ գերեզմանի մեջ արդեն հող եմ դարձել: Ապա ուրեմն այս գրքով կխոսեմ ձեզ հետ մինչև հինգ և մինչև յոթ սերունդ և հոգով կմնամ ձեր մեջ» (Բակունց, 1979: 507):

Վարդապետ Այգեկցին՝ որպես հոգևորական և միջնադարյան ժամանակային ընկալումների կրողը, մշտապես գիտակցում էր կյանքի և մահվան նուրբ բնագիծը: Ցապացույց ասվածին՝ հիշենք նրա խրատներից մեկը՝ «Վարդան վարդապետի խրատը հոգին ավանդելու օրվա մասին, երբ հոգու աստվածաշեն տաճար մարմինը քակտվում է, և հոգին ու մարմինը միմյանցից բաժանվում են» (Այգեկցի, 2008: 36-43): Խրատը չափազանց պատկերավոր նկարագրում է մահվան մահճում եղող մարդու, նաև նրան շրջապատողների հոգեվիճակը (խրատը կարող է զուգորդումներ առաջացնել համաշխարհային գրականության նման բովանդակություն ունեցող երկերի հետ, ինչպես, օրինակ՝ Լև Տոլստոյի «Իվան Իլյիչի մահը» վիպակի):

Այգեկցու համար առակը միջոց էր երկու իրականությունները՝ այսկողմնայինն ու այնկողմնայինը միմյանց մոտեցնելու, անցողիկ կյանքում խոսելու հավերժական՝ հանդերձյալ կյանքի մասին: Հոգևոր թեման աշխարհիկ կյանքի օրինակներով մեկնաբանելը, բարձրը ցածրով բացատրելը, ինչպիսին առակների պատկերներն էին՝ առօրեական դեպքերը, հենց այս խնդիրն էր իրականացնում՝ դժվար ըմբռնելին, անճանաչելին առավել պարզով, հասկանալիով բացատրելով: Ակսել Բակունցը *ենթագիտակցորեն* կարող էր այդ ամենը զգալ, բայց ինչպես երևում է իր նախաբանից, որը նա աբովյանական բառով կոչել էր «Նախաշավիղ», առավելապես հետաքրքրված էր առակի կարճառոտությամբ և արտահայտիչ հասանելիությամբ ընթերցողին, այդ ամենն իրագործելու՝ Վարդան Այգեկցու վարպետությամբ, այսինքն՝ առակի բուն՝ *ցուցանելու* գործառույթով:

---

[1] *Մանկունք Միոնի* արտահայտությունը, ինչպես *մանկունք Եկեղեցու* կամ *Ուխտի մանուկներ*, նշանակում է կրոնավորների դաս կամ Եկեղեցու սպասավոր: Մանուկ-ը, որ իր հատուկ նշանակությունն է ունեցել միջնադարում, բացի երեխա նշանակելուց, նշանակել է նաև ծառա, սպասավոր, զինվոր, նաև հոգևոր համատեքստում՝ ի սկզբանե մկրտված (Շիրինյան, 2002: 98): Այս արտահայտությունները հանդիպում են նաև մեր մյուս մատենագիրների երկերում: Վարդան Այգեկցին իր առակավոր խրատները հասցեագրել է քահանաներին. այստեղից էլ տվյալ դիմելաձևը:

1934 թ. նոյեմբերի 29-ին Բակունցը «Գրական թերթ»-ում (N 30) տպագրում է Վարդան Այգեկցուց ութ առակ, որոնք վերածել էր գրական արևելահայերենի և ենթարկել գրական մշակման: Մեկ տարի անց՝ 1935 թ., այդ ութ առակները դառնում են քառասուն: Դրանք Հայպետհրատը տպագրում է առանձին գրքով[1]: Հեղինակը նշված է՝ *Վարդան Այգեցի* (այնպես, ինչպես նրան կոչում էր Բակունցը), *առակագիր ԺԳ դարի*: Այս հրատարակությունը, բացի նախաբանից, հագեցած էր նաև ծանոթագրություններով, ինչպես նաև Հակոբ Կոջոյանի նկարազարդումներով (Բակունց, 1979: 697): Ընդ որում՝ Բակունցն այնքան է կարևորել իր այս աշխատանքը, որ Կարեն Միքայելյանին ուղղված իր նամակներից մեկում հույս է հայտնել, որ այն կթարգմանվի նաև ռուսերեն և ավելի մեծ քանակությամբ, թեև գիտեր, որ կային Մառի բնագրային թարգմանությունները (Բակունց բ, 1979: 705): Ցավոք, դրանից հետո՝ ընդհուպ մինչև 1979 թ.՝ բակունցյան երկերի քառահատորյակի լույս ընծայումը, Այգեկցու առակների՝ բոլորիս քաջ հայտնի արևելահայերեն բնագրերը հրատարակվել են առանց Բակունցի անունը նշելու կամ բնագրային աղավաղումներով (1956 թ.)[2]՝ բնականաբար՝ քաղաքական դրդապատճառներով՝ Բակունցի «անհայտ բացակայությամբ» պայմանավորված:

Դեռ «Նախաշավղի» առաջին իսկ տողերից է երևում, որ Վարդան Այգեկցու առակախառն քարոզներում Բակունցին հետաքրքրել է փոքր արձակի զարգացումը, արտահայտչաձևերը, այլ խոսքով՝ վիպականության դրսևորումները միջնադարում: Նա փորձել է զգալ միջնադարը՝ իր յուրահատկություններով հանդերձ, և այդ զգացողությամբ էլ թարգմանել է առակները: Իր առաջաբանում Բակունցը նշում է, որ Վարդան Այգեկցին, քարոզելով հայ եկեղեցու հավատո հանգանակը, նպատակ ունենալով ամրապնդել այդ եկեղեցու հիմքերը, որոնք միջնադարյան քաղաքը խարխլում էր, իր քարոզները համեմում էր ժողովրդական բանահյուսությունից քաղված զրույցներով, առակներով ու մանրավեպերով՝ դրանով հայ գրականությունը հարստացնելով ժողովրդական կենդանի ոճավորումներով, «ձևավորելով միջնադարյան հայ աշխարհիկ արձակը» (Բակունց, 1979: 516):

Բակունցը նաև հակառակն է նկատում, որ «հայ պատմիչները և առհասարակ եկեղեցին չեն սիրել և հալածել են ժողովրդական զրույցները,

---

[1] Այդ նույն թվականին, ի դեպ, Մ. Աբեղյանը հրատարակում է առակների վերաբերյալ իր վերլուծությունները, որոնք բազմամյա հետազոտության արդյունք էին, ինչը ցույց է տալիս գրական այս տեսակի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությունը տվյալ ժամանակահատվածում:

[2] Տե՛ս, օրինակ, Վարդան Այգեկցի, Առակներ, Երևան, 1981: Վերջաբանը՝ Ստեփան Թոփչյանի:

որոնց թվում նաև հեքիաթը և առակը և երգը» (Բակունց, 1979: 513): Նա բերում է Ներսես Շնորհալու օրինակը, որը բերդապահ զինվորներին իրենց «վայրապար» զրույցներից ետ պահելու նպատակով նրանց համար երգեր էր գրում և սովորեցնում էր դրանք կատարել (Բակունց, 1979: 513): Այդ նույն ուսուցողական նպատակով գրում էր նաև առակներ և հանելուկներ, ինչպիսին իր մեջբերած նռան մասին հանելուկն էր (Բակունց, 1979: 514): Այս օրինակները ցույց են տալիս, որ գրողը ճիշտ է տեսնում միջնադարի գրականության հիմնական գործառույթը՝ ուսուցողականությունը: Ըստ նրա՝ այդ գործառույթն Այգեկցին դյուրին կերպով իրականացնում էր հենց առակի միջոցով՝ հաջողությամբ առակի փոխակերպելով նաև առասպելներ և հեքիաթներ: Իսկ իր ճառերում դրանց կիրառումը մի արդյունավետ նորամուծություն էր հայ գրականության մեջ (Բակունց, 1979: 515):

Իհարկե, իր այդ վերլուծության մեջ գրողը նաև վիճելի մտքեր է հայտնում: Այգեկցու ստեղծագործությունը համարելով «աշխարհիկ» արվեստ և ոչ հոգևոր, իսկ առակների բարոյախրատական մասն ավելորդ դիտելով՝ հանելով՝ նա Վարդան Այգեկցուն հեռացնում է իր բուն նպատակադրումից, որն էր՝ երկրային իրականության միջոցով մարդուն տանելը դեպի ավելի վեհ, վերին, աստվածային իրականությունը:

Միջնադարյան գրականությանը տված Ակսել Բակունցի գնահատականներն անընդունելի են հատկապես քնարերգության վերաբերյալ, երբ չնկատելով միջնադարյան քնարերգության ամբողջական համակարգը՝ կարծիք է հայտնում, թե «միջնադարյան հայ բանաստեղծության առանձին գոհարներ չկապեցին ոչ թագ ոչ պսակ»[1]: Խորհելու տեղիք են տալիս արձակին վերաբերող նրա դիտարկումները: Բակունցն ափսոսանքով նկատում է, որ այն, ինչին հասել է ԺԲ. դարի արձակը նաև Այգեկցու շնորհիվ, հետագայում «չծավալվեց և չդարձավ ամբողջական գործ», թեև նշում է նաև դրա արտագրական պատճառը՝ «անբարի և խավարայնի» ժամանակները (Բակունց, 1979: 517):

Հայ միջնադարյան գրականության նկատմամբ բակունցյան հետաքրքրության մասին պետք է նշենք, որ այն սկսվել էր դեռևս 1920-ական թվականների երկրորդ կեսից: Բակունցը նախ փորձել է Էջմիածնի մատենադարանում հայտնաբերել միջնադարյան հայ աշխարհիկ մի ծավալուն վիպերգ, հետո ինքն է գրել միջնադարյան կյանքից մի պատմվածաշար ու հատվածներ կարդացել ընկերներին ու ծանոթներին, իսկ հետո արդեն իրեն հետաքրքրող կենսական լիցքերը տեսել է Վարդան Այգեկցու առակ-

[1] Բակունցի երկերի նախորդ հետազոտողները նկատել և քննադատել են գրողի այս գնահատականը:

ներում: Բակունցին շատ է հետաքրքրել խոսքի սեղմությունն ու պարզությունը, ինչը նա գտել է Այգեկցու երկերում, և ինչը նաև իր արձակի առանձնահատկությունն էր: Այս մասին իր հուշերում պատմում է նաև Մ. Արազին. «Մի ժամանակ նրան շատ մտահոգում էր ստեղծագործության ձևի հարցը: - Ուզում եմ գտնել մի այնպիսի ձև,- ասում էր նա,- որ լինի ավելի քան պարզ, հակիրճ և հասկանալի» (Բակունց, 1979: 699): Նշենք, որ սեղմության և պարզության այդ ձգտումն ակնհայտորեն դրսևորվել է առակների իր փոխադրություններում:

Թեև իր աշխատության ծանոթագրություններում Բակունցը մանրամասնորեն նշում է, թե յուրաքանչյուր առակը որ ձեռագրից կամ ժողովածուից է քաղված, կամ բացի Այգեկցուց՝ որ առակագրի ստեղծագործության մեջ է հանդիպում, սակայն իր բնորոշմամբ՝ որպես «քարացած» աղբյուր նախ և առաջ հիշատակում է Ոսկան Երևանցու՝ 1668 թ. Ամստերդամում հրատարակած «Աղվեսագիրք» ժողովածուն և այդ նույն ժողովածուի վերահրատարակությունները՝ 1676 թ. (Մարսել), 1683 թ. (Մարսել), 1698 թ. (Լիվոռնո): Իր մշակումներում նա մեծապես օգտվել է նաև Նիկողայոս Մառի կազմած բնագրերից, նրա ռուսերեն թարգմանությունից, ինչպես նաև շատ հարցերում հիմնվել նրա ուսումնասիրությունների վրա: Այդպես էր «Աղվեսագիրք» խորագրի մեկնության դեպքում: Այսպես, առանց տալու հրատարակչի՝ Ոսկան վարդապետ Երևանցու անունը[1]՝ Բակունցը նշում է, որ ըստ Նիկողայոս Մառի՝ առաջին հրատարակիչը, ծանոթ լինելով եվրոպական լեզուներին, այդ լեզուների նմանությամբ, այս ժողովածուն կոչել է Աղվեսագիրք («Fuchbuch») (Բակունց, 1979:): Ի դեպ, անվան այս նույն մեկնությունն է տալիս նաև Հովսեփ Օրբելին, որը, վկայակոչելով Նիկողայոս Մառի տքնաջան աշխատանքը, ընդգծում է առակների գրքի ծագման պատմությունը, ինչն էլ եղել է Մառի առաջնադիր խնդիրն այս ուսումնասիրության մեջ: Իր հետազոտությամբ Մառն ապացուցում էր, որ արաբերեն բնագիրը, որը նաև եվրոպական գրականություններին էր անցել, իրականում Վարդանի առակների թարգմանությունն էր (Орбели, 1956: 21): Այս նույն փաստի վրա ավելի վաղ ուշադրություն էր դարձրել և այդ մասին իր «Նախաշավիղ»-ում նշել էր նաև Ակսել Բակունցը (Բակունց, 1979: 517):

---

[1] Անհնար է գերագնահատել Ոսկան վարդապետ Երևանցու դերը հայ ժողովրդի մշակութային կյանքում: Նա հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի հրատարակիչն էր (1666 թ.), ինչը դյուրին չէր եղել իրականացնել օտար ափերում, առանց պետական հովանավորչության՝ ունենալով միայն հայոց կաթողիկոսի հանձնարարականն ու իր ամուր կամքը:

Առակների ստեղծման վերաբերյալ Բակունցն ուներ իր կարծիքն առ այն, որ դրանք ժողովրդական ստեղծագործություններ են։ «Վարդան Այգեկցու նշանակությունը մեծ է ամենից առաջ իբրև առակներ ժողովող և առակները մեկնության հետ միասին ճաշակով և վարպետությամբ ամբողջացնող հեղինակ» (Բակունց, 1979։ 515)։ Նկատենք, որ իր ընտրած առակներում թեև գերակշռում են մարդկային հերոսներով առակները, սակայն կարևոր դերակատարում ունի աղվեսը, ինչի վկայությունը «Աղվեսագիրք» անվան ընտրությունն է։ Այս առումով գրական զուգահեռների և առնչությունների իրականության մեջ հետաքրքիր և գուցե ոչ պատահական համընկնում է այն, որ նույն դարում, երբ Ոսկան Երևանցին «Աղվեսագիրք» վերնագրով հրատարակում էր Այգեկցու առակների ժողովածուն, վերնագիր, որ, ինչպես տեսանք, տարածված էր նաև Եվրոպայում, աշխարհի մեկ այլ ծայրում՝ Չինաստանում, գրվում էին խրատական կարճ պատմություններ, որոնց գլխավոր գործող անձը կրկին աղվեսն էր (հիմնականում իգական սեռի), և որոնք հաճախ կոչվել են այդ գլխավոր գործող անձի անունով, օրինակ՝ «Աղվեսային հմայանքներ»։ Մինչ օրս Չինաստանում մեծ խմբաքանակով հրատարակվող այդ մանրապատումների հեղինակը Պու Սուն-լին է՝ Լյաո Չժայ մականունով (1622–1715 թթ.)։ Ընդ որում՝ այստեղ ևս աղվեսը մերթ խորամանկ է, մերթ նենգ, մերթ խելացի, մերթ արդարություն հաստատող, մշտապես գայթակղող։ Նա կարող է խորամանկել, սակայն պատժելու նպատակով, ի ցույց դնելու համար մարդկային այս կամ այն արատը։ Այս աղվեսը տարբերվում է «Աղվեսագրքի» առակների հերոսից, սակայն իր կերպարով նա նույնպես կապ է ստեղծում երկու տարբեր աշխարհների՝ իրական-առօրեականի և ինչ-որ առեղծվածային, խորհրդավոր աշխարհի միջև։ Նա հայտնվում է մարդկանց կյանքում, հաճախ սիրային հարաբերության մեջ մտնում նրանց հետ՝ իր նպատակին հասնելու համար։ Այս փաստը հիշատակելով՝ հակված չենք կարծելու, թե մշակութային փոխանցում է տեղի ունեցել՝ մանավանդ չինական գրականության փակ, ինքնամփոփ լինելը նկատի ունենալով, սակայն զուգահեռ պատկերների ինչ-որ նույնականություն կարող ենք դիտարկել, քանի որ այս ստեղծագործությունները, իրենց հերթին, այս ձևով Կոնֆուցիոսի ուսմունքն են տարածում՝ վեհագույնին ծառայելու մարդու կոչման մասին (Պու Սուն-լին ա, 2022։ 15)։

Այսպիսով՝ հոդվածի սույն հատվածն ամփոփելով՝ նշենք, որ «Աղվեսագիրք» անվան ընտրությամբ նույնպես Ակսել Բակունցը հարազատ է մնացել միջնադարյան առակագրության ոգուն, թեև անտեսել է կրոնադավանաբանական ենթատեքստը, ինչը, անշուշտ, ժամանակի և իր ապրած իրականության պահանջն էր։

Առակների բակունցյան մշակումների բնույթը

Այժմ մի քանի օրինակով փորձենք ցույց տալ Վարդան Այգեկցու առակների բակունցյան մշակումների մեր որոշ դիտարկումները՝ միանգամից նշելով գեղագետ գրողի ոճի և անհատականության դրոշմը, որն ակնհայտ է դառնում թե՛ առաջին հայացքից, թե՛ այլ թարգմանությունների հետ համեմատելիս[1]: Այս հարցին մանրամասն անդրադարձել է գրականագետ Մ. Ավդալբեգյանը իր «Ա. Բակունցի կազմած «Աղվեսագիրք» ժողովածուն» ուսումնասիրության մեջ (Ավդալբեգյան, 2009: 270-292): Չկրկնելով նրա կատարած տեքստային վերլուծությունները՝ դրանց հավելենք մեր դիտարկումները հոդվածում առաջադրած հարցադրումների դիտանկյունից, այն է՝ միջնադարի բակունցյան ընկալումն ու առակի պոետիկ էության արտացոլման՝ գրողի վարպետությունը:

Բովանդակային առումով միջնադար և արդիականություն զուգահեռը Բակունցին ստիպում է որոշ փոփոխություններ կատարել առակների բնագրերում: Այդ փոփոխությունների մասին, ինչպես, օրինակ՝ որտե՞ղ է կրճատել սկսման բանաձևը՝ «առակն ասում է», որտե՞ղ դուրս թողել փակման բանաձևը՝ «առակը ցույց է տալիս», նա խոսում է իր աշխատության «Ծանոթագրություններ» բաժնում: Այսպես՝ «Թագավոր և օձ» առակն սկսվում է համապատասխան *առակն ասում է* բանաձևով («ասի յառակաց»), սակայն գործողությանն առավել սրընթացություն հաղորդելու նպատակով Բակունցն այն սկսում է միանգամից՝ առանց սկսման բանաձևի՝ «Կար մի թագավոր»: Այգեկցու առակում ասված է. «Իսկ յորժամ մեծացաւ մանուկն *կապեալ սուր ընդ մէջս իւր»*: Գրաբար բնագիրը զենք գործածելու այս տեղեկույթով կարծես ցույց է տալիս անմեղ մանկան հասունանալը, մեծերի աշխարհին պատկանելը: Բակունցի ապրած ժամանակի համար այս տողն այնքան էլ էական չէր, կարևոր էր զուտ գործողությունը, ուստի թարգմանիչը գերադասել է կրճատել այն:

Բակունցը գերադասում է երկխոսությամբ ներկայացնել իրավիճակը հնարավորության դեպքում, մինչդեռ գրաբարյան բնագրում այդ նույն դրվագը պատմվում է: Այսպես՝

Իսկ յետս դոյն և միսիթարութեան, առաքեաց թագաւորն որ	*Թագավորը խնդրակներ ուղարկեց այն օձի մոտ և ասաց. «Գի-*

[1] Հմմտ. օրինակ Մ. Բաբաջանյանի «Հոգևոր առականի» ժողովածուում տեղ գտած առակների թարգմանության հետ: Համեմատությունն առաջին իսկ հայացքից ակնհայտ է դարձնում Ա. Բակունցի բնագրի գեղեցկությունը՝ շաղկապի կիրառությունից (*և* շաղկապի հմուտ կիրառությունը, որով պահպանել է Ագեկցու բնագրի հարազատությունն ու խորհրդավորությունը) մինչև դիպուկ մակդիրներ և դիպուկ վերնագրի («Գարու հաշիվը») ընտրություն:

գտանեն զօձն. և աղաչէին զնա գալ 'ի տեղի բնակութեան իւրոյ… (Աղուէսագիրք, 1668: 78)	*տեմ, որ առաջ իմ որդին է ծռութ-յուն արել. նա կտրել է քո պոչը, ապա դու կծել ես նրան…»* (Բակունց, 1979: 525):

Նույնն է նաև «Առյուծ և մարդ», «Այրի կին և խորթ որդի» առակներում: Մի դիտարկում ևս. բակունցյան բնագրում երկխոսությունները ներկայացված են ուրիշի ուղղակի խոսքով՝ ի տարբերություն Այգեկցու առակի անուղղակի խոսքի պատմելառճի (Աղուէսագիրք, 1668: 86): «Գող քահանա և այրի կին» առակը աչքի է ընկնում գործողությունների սրընթաց զարգացմամբ. «Եվ այն ժամանակ քահանան կովը տարավ ներսի տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից եկեղեցի» (Բակունց, 1979: 536): Հմմտ.՝ գրաբար բնագրի հետ (Աղուէսագիրք, 1668: 68):

Բակունցն իր մշակումներում բաց է թողել առակի եզրահանգող՝ *Յուցանէ* հատվածը: Դրանք շատ հաճախ Այգեկցու բուն խրատական նպատակներին պատասխանող հատվածներ են, կրոնադավանաբանական համատեքստի մեջ են, հետևաբար ավելիով են հեղինակային եսի դրոշմը կրում, այն դեպքում երբ առակի գեղարվեստական բնագիրը դուրս է ժամանակային կաշկանդումներից: Այդպես «Թագավորն ու օձը» առակի մեկնությունը գրաբար բնագրում հանգեցվում է անմեղորեն չարության, նախանձի և մախանքի ենթարկվելուն, մինչդեռ բակունցյան բնագրում այն առավել խոր հոգեբանական մեկնություն ունի՝ դառը հիշողության և պատճառած չարիքի, ինչպես նաև անմոռանալի ցավի մասին է:

«Հիմար և ձմերուկ» առակը, ըստ մեկնության, ցույց է տալիս այն մարդկանց և քահանաներին, որոնք, աշխարհի սուտ ու պատիր բաների ետևից գնալով, ողորմելի են դառնում, իսկ մինչ եզրահանգումը պարզապես հիմար մարդուն դրության կոմիզմով պատկերող բնագրի հետ գործ ունենք: Բակունցյան տարբերակում շեշտը դրված է հենց մարդկային հիմարության և այդ ամենը երգիծելու գրական հնարանքի վրա:

Մենք նշեցինք գրաբարից աշխարհաբար գեղարվեստական բնագրի ընկալման ազատության մասին, սակայն չմոռանանք նաև հակառակ երևույթը՝ դրանց հնարավոր պարզունակացումը, երբ զրկվում են իրենց դավանաբանական ուղղվածությունից: Հաճախ առակները, ըստ իրենց բարոյախրատական վերջաբանի, բոլորովին այլ իմաստ են արտահայտում: «Այրի կին և խորթ որդի» առակը, որտեղ այրին աղոթում է իր կովի կերը գողացող խորթ որդու էշի սատկելու համար, սակայն իր կովի սատկելն է տեսնում, առանց եզրահանգման կարող է մեկնաբանվել որպես սասանված հավատի դրսևորում, Աստծուն ծաղրելու պատմություն, երբ կինը բացականչում է. «Ո՜վ Աստված, մի՞թե չկարողացար էշը կովից տարբե-

ել»։ Աստծու «անկարողությունը» լիովին համապատասխանում է աստվածամերժության խորհրդային քաղաքականությանը։ Իրականում՝ միջնադարի ըմբռնումներում, այն բոլորովին այլ մեկնություն ունի։ Ըստ այդ մեկնության՝ ուրիշի համար չարը կամեցողն ինքը պետք է այդ չարիքին արժանանա։

Երբեմն հետաքրքիր փոփոխություններ ենք տեսնում մակդիրների մեջ։ Ոսկանյան հրատարակության մեջ «Առյուծ և Գայլ և Աղվես» առակում (ի դեպ, առակներն այստեղ վերնագրեր չունեն, դրանք հետագայում ավելացրել է Նիկողայոս Մառը), երբ աղվեսն առյուծի սրտով է կատարում որսի բաժանումը, խոյը, մաքին և գառը տալով նրան, Առյուծը նրան դիմում է «*Ո՛վ գերի աղուեսուկ.* ո՛վ ուսոյց քեզ զարդար դատաստանդ, զոր արար» բառերով՝ *գերի* մակդիրով ընդգծելով աղվեսի ի սկզբանե կախվածությունն ու ստորադաս վիճակն իրենից, իմա՛ արքայից կամ տիրոջից, մինչդեռ բակունցյան թարգմանության մեջ արտահայտությունը հարմարեցված է Ի. դարի ընթերցողի մտքին և դարձել է «*Ո՛վ խորամանկ աղվես*, քեզ ո՛վ սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել»։

Եզրակացություն

Այսպիսով՝ միջնադարի նկատմամբ հետաքրքրությունը Ի. դարի արձակագիր Ակսել Բակունցի ստեղծագործության մեջ իր արտահայտությունն է գտել անդրադարձով առակի ժանրին, մասնավորապես՝ ԺԳ. դարում ստեղծագործած Վարդան Այգեկցու առակների գրաբարից աշխարհաբար փոխարկումով։ Այն, որ դա սովորական հետաքրքրություն չէր և չէր սահմանափակվում միայն թարգմանությունների մակարդակում, երևում է Ակսել Բակունցի որոնումներից ընդհանրապես հայ միջնադարյան գրականության տիրույթում և «Նախաշավիղ» վերնագրով վերլուծական անդրադարձից առակի ժանրին։ Գրական այս տեսակը Բակունցին գրավել է իր սեղմության և միաժամանակ պատկերավորության շնորհիվ։ Միջնադարյան առակի պատմողական ոճը նա հագեցրել է սրընթացությամբ և երկխոսություններով՝ ինչը առակներին հոգեբանական նոր խորք և կենսականություն է հաղորդում։ Վարդան Այգեկցու առակները, Ի. դարի ստեղծագործողի մտքի և հոգու միջով անցնելով, առանց իմաստային և ոճական կորուստների են հանձնվել ընթերցողներիս՝ միաժամանակ չկորցնելով իրենց՝ միջնադարյան գրին բնորոշ հմայքն ու ասելիքի առինքնող դիպուկությունը։

Գրականության ցանկ

1. **Աբեղյան Մ.**, Երկեր, հտ. Դ., Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 635 էջ:
2. **Աղուէսագիրք** // Աշխարհացոյց, Ամստերդամ, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1668, 312 էջ:
3. **Ավդալբեգյան Մ.**, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., «Գասպրինտ» հրատ., 2009, 344 էջ:
4. **Բաբաջանյան Մ.**, Հոգևոր առակների, Ե., ՄՀՄ գրատուն, 2014, 300 էջ:
5. **Բակունց Ա.**, Երկեր 4 հատորով, հտ. II, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, խմբ. կոլեգ.՝ Ս. Աղաբաբյան և ուրիշներ: Բնագրերը կազմեց և ծանոթագրեց Ռ. Իշխանյանը: Խմբ. Ա. Գ. Զաքարյան, 715 էջ:
6. **Գալստյան Ս.**, Դպրոցական բառակազմական բառարան, Ե., Զանգակ-97, 2011, 232 էջ:
7. **Մառ Ն.,** Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ., Սանկտ Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1894, 344 էջ:
8. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, 2235:
9. **Շիրինյան Մ.**, Ուխտի մանկունք և մանկունք եկեղեցւոյ, *Էջմիածին*, 2002, Ը., էջ 90-110:
10. **Պիվազյան Էմ.**, Վարդան Այգեկցի, Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1976, 579 էջ:
11. **Վարդան Այգեկցի**, Աղվեսագիրք [Առակներ], Երևան, 1981, 112 էջ: Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան, վերջաբանը՝ Ստ. Թոփչյանի:
12. **Վարդան Այգեկցի**, Ա. Խրատ քահանաներին և ժողովրդին, Բ. Խրատներ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2008, 288 էջ:
13. **Виготский Л.,** Психология Искусства, М., изд. АСТ, 2023, 480 с.
14. **Марр Н.,** Сборник притч Вардана, часть 1, Санкт-Петербург, Имп. Акад. Наук, 1899, 594 с.
15. **Орбели И.,** Басни средневековой Армении, Москва – Ленинград, 1956, 180 էջ:
16. **Пу Сун-лин,** Рассказы о необычайном, Санкт-Петербург, изд. «Азбука», 2022, 400 с.
17. **Пу Сун-лин,** Лисьи чары, Санкт-Петербург, изд. «Азбука», 2022, 384 с.

References

1. **Abeghyan M.,** Erker [Works], ht. D., E., HSSH GA hrat., 1970, 635 ej (in Armenian):
2. **Aghowesagirq** // Ashxarhacoyc [The Book of the Fox // Ashkharhatsuyts (Geography)], Amsterdam, tp. S. Ejmiacni ev S. Sargsi, 1668, 312 ej (in Armenian):
3. **Avdalbegyan M.,** Hodvacner ev usumnasirutyunner [Articles and Studies], E., «Gasprint» hrat., 2009, 344 ej (in Armenian):
4. **Babajanyan M.,** Hogevor arakani [Spiritual Parables], E., MHM gratun, 2014, 300 ej (in Armenian):

5. **Bakunc A.,** Erker 4 hatorov [Works in Four Volumes], ht. II, E., HSSH GA hrat., 1979, xmb. koleg.` S. Aghababyan ev urishner: Bnagrery kazmec ev canotagrec R. Ishxanyany: Xmb. A. G. Zaqaryan, 715 ej (in Armenian):
6. **Galstyan S.,** Dprocakan barakazmakan bararan [School Derivational Dictionary], E., Zangak-97, 2011, 232 ej (in Armenian):
7. **Mar N.,** Jhoghovacoyq arakac Vardanay [Collection of the Parables of Vardan], masn B., Sankt Peterburg, tp. I. N. Skoroxodovi, 1894, 344 ej (in Armenian):
8. **Nor bargirq haykazean lezowi [**New Dictionary of the Armenian Language**],** Tparan i Srboyn Ghazaru, Venetik, 1836, 2235 (in Armenian):
9. **Shirinyan M.,** Uxti mankunq ev mankunq ekeghecu [Children of the Covenant and Children of the Church], *Ejmiacin*, 2002, Y., ej 90-110 (in Armenian):
10. **Pivazyan Em.,** Vardan Aygekci, Hay mshakuyti nshanavor gorcichnery [Vardan Aygektsi. Prominent Figures of Armenian Culture], E., Erevani hamalsarani hrat., 1976, 579 ej (in Armenian):
11. **Vardan Aygekci,** Aghvesagirq (Arakner) [The Book of the Fox (Fables)], Erevan, 1981, 112 e'j: Xmbagir`R'. G. Sargsyan, verjabany` St. Topchyani (in Armenian):
12. **Vardan Aygekci,** A. Xrat qahananerin ev jhoghovrdin, B. Xratner [A. Admonition to Priests and the People; B. Admonitions], S. Ejmiacin, Mayr Ator Surb Ejmiacni hrat., 2008, 288 ej (in Armenian):
13. **Vigotskij L.**, Psihologija Iskusstva [Psychology of Art], M., izd. AST, 2023, 480 s. (in Russian).
14. **Marr N.**, Sbornik pritch Vardana [Collection of the Parables of Vardan], chast 1, Sankt-Peterburg, Imp. Akad. Nauk, 1899, 594 s. (in Russian).
15. **Orbeli I.**, Basni srednevekovoj Armenii [Fables of Medieval Armenia], Moskva – Leningrad, 1956, 180 s. (in Russian):
16. **Pu Sun-lin**, Rasskazy o neobychajnom [Strange Tales from a Chinese Studio], Sankt-Peterburg, izd. «Azbuka», 2022, 400 s. (in Russian).
17. **Pu Sun-lin**, Lis'i chary [Fox Enchantments], Sankt-Peterburg, izd. «Azbuka», 2022, 384 s. (in Russian).

Լուսինե Վարդանյան *– բանասիրական գիտությունների թեկնածու, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի ավագ գիտաշխատող, Գրականագիտական հանդեսի խմբագրի տեղակալ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է հայ և համաշխարհային միջնադարյան գրականությունը, ընդհանրապես գրականության պատմության և տեսության հարցեր, ինչպես նաև արդի գրականությունն ու նրա արժևորումը: Հեղինակ է 27 հոդվածի, որոնք տպագրվել են գիտական մամուլում և ժողովածուներում: Հեղինակել է «Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն»-ը. գրականագիտական վերլուծություն» մենագրությունը, խմբագրել գիտական ձեռնարկներ և ժողովածուներ:*

ORCID ID: 0009-0001-9731-7033
lusinevardanyan@litinst.sci.am

Lusine Vardanyan *– PhD in Philology, Senior Researcher at the Department of Ancient and Medieval Armenian Literature, Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA, Editor of the Literary Journal.*

Her research interests include Armenian and world medieval literature, issues related to the history and theory of literature, as well as contemporary literature and its evaluation. She is the author of 27 articles published in academic journals and collections. Vardanyan has written the monograph ""Aristakes Lastiverttsi's "History": A Literary Analysis" and has edited academic manuals and collections.

ORCID ID: 0009-0001-9731-7033
lusinevardanyan@litinst.sci.am

Лусине Варданян *– кандидат филологических наук, старший научный сотрудник отдела древней и средневековой армянской литературы Института литературы имени М. Абегяна НАН РА, редактор Журнала литературоведения.*

Круг её научных интересов включает армянскую и мировую средневековую литературу, вопросы истории и теории литературы, а также современную литературу и её оценку. Автор 27 статей, опубликованных в научных изданиях и сборниках. Лусине Варданян является автором монографии ««История» Аристакеса Ластиверци: литературоведческий анализ», а также редактором научных пособий и сборников.

ORCID ID: 0009-0001-9731-7033
lusinevardanyan@litinst.sci.am